

նպատակից չը շնորհեմ, բաւական կը համարեմ ասել թէ՛ ինչ անառաշ անմիտ և անհասկանալի հրամաններ են արձակուած ուսուցչի վրա, երբ այս վերջինը կամեաւ է պաշտպանել իւր իրաւունքները և ըստ այնմ գործել: Միւս կողմից ժողովուրդը, եթէ չեմ սխալուած, տեղեկութիւն չունենալով դատարարական թեան, ուրեմն և դատարարակցի վրա, չէ տեղեկանում թէ՛ նա ի՞նչ է սովորացրել, ի՞նչ պտուղ է տուել որովհետեւ տարիներ ընթացքում մի անգամ էլ մարդ չէ մտնում ուսումնարան, այլ իւրաքանչիւրը նայում է միայն ուսուցչի արտաքին շարժողութեան վրա, թէ՛ նա ի՞նչ է ուսում, խմում, հագնում և այլն: Սորա հետեւեք ընում է այն որ խեղճ ուսուցիչը հասարակութեան սառնասրտութիւնից ինքն էլ թուլանում է, իսկ նորա աւելորդապաշտութիւններից զգուշութեամբ փախուած, որովհետեւ նա վաղեմի է ազատ և պարզ կեանք: Այդ էլ թողնենք. տարիների ընթացքում նա մի հասկացող մարդու երես չէ տեսնում. նորա տեսած մարդիկ, որոնց հասկացողութիւնը շատ ստոր աստիճանի վրա է, չեն գրաւում ուսուցչին, ուստի և միշտ հեռու է մնում և եթէ մտենայ էլ նոցանից ոչինչ օգուտ չէ կարող քաղել այսինքն այնպիսի օգուտ, որով կարողանար իւր ուղիղը զարգացնել իւր հասկացողութեան շրջանը լայնացնել ուստի մնում է և կը մնայ այն, ինչ որ եղել է և զուցէ ունեցածն էլ կորցնէ, որովհետեւ այս անբաղդութեան հետ կից է և այն ամենամեծ թշուառութիւնը որ գաւառների մէջ մեծ մասամբ չը կան գրատուններ, ընթերցարաններ, չեն լինում մտաւորապէս անուղ տուող ընկերութիւններ, ժողովներ և այլն: Շատ հեշտ կը լինի ասել թէ՛ այդ բոլոր ոչինչ, բայց այն մարդը, որ փորձել է ու տեսել այսպիսի կեանք, ինձ հետ կը համաձայնուի որ այն մարդը, որ զուրկ է օրինաւոր, իրանից բարձր ուսում առած մարդիկների հասարակութենից, մտաւոր շարժողութիւնից, աշխարհիս երեսին պատահած նորութիւններից, նորանոր գրքեր ու լրագիրներ կարդալուց, այդպիսի մարդը մարդ չէ, այլ մի անասուն, որ ստեղծուել է միայն ուսել խմելու համար: Գաւառական ուսուցիչը, որին յանձնուած է անպաշտ սերունդի դաստիարակութիւնը, որի վրա դրուած է այնպիսի լուծ, որի նմանք փաստահանութիւնը կը լինի այն որ անցնելով մի քանի տարիներ հեռագիտէ կը ընթանայ, կը կորցնի իւր արժանաւորութիւնը, վայր կընկնի բարոյապէս և վաղ թէ ու զգուշութեամբ իւր պաշտօնից կը լայ և կ'ողջայ իւր կեանքը, իսկ նորա տեղը կը բռնի մի ուրիշը, որին զարմեալ սպասում է առաջին թշուառութիւնը: Ինչո՞ւ: Նորա համար որ գաւառական ուսուցչի ստացած ուժիկը շատ քիչ լինելով հազիւ թէ նա կարողանայ իւր կողմը լցուցանել: Ստիպել որ նա լինի օրինաւոր ուսուցիչ մենք իրաւունք չունենք, մինչդեռ նա ոչ մի գիւրք չէ կարողում, ոչ մի լրագիր չէ ստանում, մէկ խօսքով նորա ուղիղ պաշարը հասնում է, իսկ մենք այդ մեր պարտականութեան վրա չենք մտածում: Թէ ի՞նչ պիտի արած, թէ ո՞վ մտածէ, թէ ո՞ւմ պարտականութիւնն է. այդ է բուն խնդիրը և յօդուածի վերջաբանը: Պարզ բան է մենք առ ժամանակ չենք կարող գաւառական ուսուցչին տալ այնքան դրամական միջոց, որ նա կարողանայ ապրել և նորանոր գրքեր ու լրագիրներ ոտանալ. անկարելի է նոյնպէս ուղիղ ժողովուրդը, որ նա հասկանայ ուսուցչի բարձր նշանակութիւնը և ըստ այնմ յարգանք ցոյց տայ իւր սերունդի սիրտն ու միտքը լուսաւորչին, որովհետեւ դորա համար հարկաւոր է երկար ժամանակ... Մնում է միայն

մի բան անել և այն էլ շատ հեշտութեամբ, այսինքն գտնել մի միջոց, որով գաւառական ուսուցիչը կարողանայ իւր արհեստի մէջ լինել արի, միշտ նոր, թալմ և գործունեայ: Բայց թէ ի՞նչպէս հասնել այս նպատակին, դա, եթէ չեմ սխալուած, նոյն իսկ ուսումնարանների և նոցա կառավարողների (թեմական վերատեսուէրների) գործն է: Մենք ունենք մի քանի այնպիսի ուսումնարաններ, որոց տարեկան եկամուտը միջին թիւով հասնում է 1000-ից մինչև 3000 մանէթի. եթէ այդ գումարից մի փոքր գումար պահէինք, յետ գցէինք և նորանով մանկավարժական և մանկական, երեխայոց մաստիչի գրքեր առնէինք, մի քանի տարից յետոյ ամեն ուսումնարան կունենար իւր համար փոքրիկ գրատուն, որից օգուտ կը քաղէին թէ ուսուցիչները և թէ ուսանողները, այսինքն մենք նորանով իրաւ տեսակ օգուտ կը քաղէինք առաջին որ ուսուցիչներին կօգնէինք բարոյապէս, նոցա իւրեանց գործի մէջ միշտ թալմ և անփաստ կը մնային, իսկ երկրորդ օգուտը որ պակաս նշանաւոր չէ, մեր աւարաւած սանիկներին, մանաւանդ այնպիսիներին որոնք իւրեանց չբարձրութեան պատճառով չեն կարողանում բարձր կրթութիւն ստանալ, որի պատճառով կորչում անհետանում են, կը կապէինք մեզ հետ, ուսումնարանի հետ և կարող եմ ասել որ նոցա ժամանակով գուցէ և օգնէին այդպիսի օգուտաւէտ հիմնարկութեանց: Ես յոյս ունեմ որ մեր պ. պ. թեմական վերատեսուէրները կը մտածեն և կիրաւորեն այս իմ առաջարկութիւնը:

Ա.

ՆԱՄԱԿ ԲԱՐՈՒՄԱՆԱՐԱՅԻՅ

24 մարտի

Թէ մեր հայ պարբերական թերթերը, թէ օրապարբերական և ամսական հանդէսները առանձնապէս ուշադրութիւն չեն դարձրած մեր հայոց ընտանեկան կեանքին, բայց (Մշակի) լրագրից, որ վեց տարի շարունակ անդադար չարժեքում է մեր ընտանեկան կեանքին անբաւականանքով կազմակերպութեան խնդիրը:

Շատ ժամանակ չէ (Մշակ) մէջ երեւց կրկին ընտանեկան կեանքին վերաբերեալ յօդուածներ մի շարք, որտեղ բացատրուած են ընտանեկան պարտականութիւնները առհասարակ: Եւ էլ, իբրեւ անհնաւոր, տեսնելով մեր գիւղացիները մէջ տիրած վատ ընտանեկան կեանքը, տեսնելով այն բոլոր վնասները, որոնք առաջանում են մեր ընտանեկան աշխարհակազմակերպութեանց, ցանկանում եմ դրա մասին քանի մի խօսք ասել:

Հետազօտելով մեր գիւղացիներին ընտանեկան կեանքը, մեր առաջ մի տարօրինակ և անբնական տեսարան է ներկայանում՝ ընտանեկան երկու տարբեր սկզբ, — կինը բոլորովին նախնական մարդը նորա զվարթ իրեն տէր և բռնաւոր: Այնքան զուրկ է բոլորովին այն միջոցներից, որ նա իբրեւ իր սեփականութիւն պէտք է համարէր, բնատանեկան շրջանում իր պարտականութիւնը կատարելու համար:

Մի տան մէջ, ուր երկու կամ երեք եղբայր միասին ապրում են անբաժան իրանց ընտանիքով, միշտ ծագում է խռովութիւն և վէճ, որից առաջանում է բաժանում, այն էլ կոխներով, փոխանակ սիրոյ և համաձայնութեան: Շատ յաճախ, մասնաւոր բացառութեամբ, երկու ամուսինների մարդիկ և կնոջ մէջ առաջանում է խռովութիւն, անհամաձայնութիւն և անընկերակցութիւն: Այս խռովութեան խորը արդէն զբնուէ և ընտանեկան նոյն իսկ նշանագրութեան օրից: Մեծ մասամբ աղան և աղջիկը միմեանց չեն սիրում, պարզ կատարվում է ծնողների կամքով, որի դէմ իրանց տնտեսութիւնը տղան կամ աղջիկը յայտնել իրաւունք չունեն: Պատկը մեծ մասամբ լինում է բռնի: Նշանագրութեան օրից պատկերներն սրտում դրոշմված է չկամութիւն. նոցա միմեանց չեն սիրում, բնական սիրով, ոչ այժմ և ոչ յետոյ: Որ աւելորդ ընկերական սիրով կապը կարվում է, սրտաշանում է բռնութիւն, հետեւապէս զոգոհում, խռովութիւններ և վերջապէս զօրեղ թոյլի վրա կատարեալ տիրապետութիւն: Ան-

հաղադարձութեան յայտնվելուն պէս երեսն է գալիս բռնի ֆիզիկական ոյժ, ծեծ... Վերջում պէս կինը կնքարկում է իր վիճակին և համբերութեամբ տանում է բոլոր հարուածները:

Շատ անգամ մի հնչին բան առիթ է լինում մարդու իր կնոջ հետ զազանական վարմունքի: Այնքան գնում է ջուր բերելու համար, և չը նստի իր արդիւնքով և ողորմելի կանանց բաց երեսով չըլնել, կինը պատահաւոր երեսը չը ծածկած դուռն է գնում: Հարեանքներ սկսում են բամբասել, մարդու ականջին հասնում են իր կնոջ այդ անվայել համարված վարմունքը և երբ կինը տուն է վերադառնում, մարդը առանց աղետալութեան սկսում է ծեծել նրան մահապաշտ ամուսնակիցով, կամ մի ուրիշ բանով...

Տարի չէ անցնում որ մեր գիւղերում կանանցից ջուր ընկնող չը լինի. կամ պատահում է որ թոյլով էլ խեղդվում են, կախվում են: Գիւղացի կանանցից շատերը լաւ են համարում մեռնել, քան թէ ապրել և իրանց մարդու բարբարոսական վարմունքին կնքարկել: Մարդը շատ անգամ այնպէս է ծեծում իր կնոջ, որ սա քանի մի օր հիւանդ լինելուց յետոյ, մեռնում է, հայրը ծեծում է իր որդուն: Պատահել է որ հայրը կոցնով խիկ էր իր օրդու գլխին:

Ղազարի և ուրիշ մեր վիճակներում գիւղական բնտանեկան կեանքը այսպիսի յետին բարբարոս և վայրենի դրոշմներն էլ է:

Յանկարի է որ մեր հայոց հանդէսները առելի զբաղվեն մեր շինականների բնտանեկան կեանքի խնդիրը մշակելով: Յանկարի է որ և մեր հոգեւոր իշխանութիւնը ուշադրութիւնը դարձնէ այդ տրւաւ երեւոյթների վրա:

Գ. Ե.

ՆԱՄԱԿ ՅԻՆԵՎԱՆԻՅ

Մինչև 1862 թուականը գիւղացիները լինելով իշխանների և աղետալանների իշխանութեան ներքոյ, մեծ չարչարանքի մէջ էին: Չունէին սեփականութիւն ոչ տուն, ոչ հող և ոչ էլ կենդանիք: Գիւղացիները մշակում էին հողերը և աղյուները, իսկ պարտները վաղելում էին եկած պտուղները: Իշխանների, աղետալանների հոգեւոր վարել, այցելելը մշակելու տան համար ծառայ և աղապիսի գտնել — գիւղացիների պարտականութիւնն էր: Այժմ էլ էին մարդու տալիս, գիւղացիները պէտք օժիտ պատրաստելին և այսպիսով թաղվում էին ահալին պարտերի մէջ: Բռնաւորական աղեղնութիւնը մեղ էր նոցա բնտանեկան և հասարակական կեանքի մէջ և այն աստիճան խեղդել էր նոցա մէջ ազատութեան ձայնը, որ թշուառ ճորտը առանց իշխանի հրամանի, կրտսեր չունէր կապել իւրեան ամուսնական կապով իւր ջանկացածի հետ: Գիւղացիները գտնուելով բազմից անցանոց բերմամբ այս տեսակ հարստահարութեան տակ, կարող էին արդեօք մտածել բարեփոխել իւրեանց անտեսական և մտաւորական վիճակը: Ոչ, ամենին ոչ. այս հարստահարութիւնը բոլորովին ստորացրել էր նոցա մէջ մարդկային փնտ կոչումը և պարտականութիւնը, կաշխատել էր նոցա մտածողութիւնը և ազատ ու օրգանական մարդուց դարձրել էր մի անկենդան, մեռելալ մեքենայ:

Վերջիվերջ թուականին Նորին Ապստեղական Մեծութիւնը ազատեց ճորտերին իւրեանց պարտների բռնաւորական ճնշումից: Վերջապէս գիւղացիները ունեցան իրանց համար ազատ և քաղցր բնտանեկան կեանք, այնպէս, որ իւրաքանչիւր գիւղացի դարձաւ իւր ընտանիքի մէջ անձնական: Ուրեմն մնում էր գիւղացիներին բարեփոխել իւրեանց բնտանեկան և անտեսական կենցաղավարութիւնը, յառաջ տանել իւրեանց մտաւորական և բարոյական ուժերը: Բայց արդեօք մեր գիւղացիները երբ կը հասնեն այս բախտաւոր դրութեան: Այն ժամանակ, երբ մեր գիւղացիները կը հետաքրքրուէին եւրոպական երկրագործութեամբ, կը տեղեկանային հողի բազարութեան, օգտաւարութեան, արտադրութեան հետ, ծառերի և սրիների կանոնաւոր աճելուն հետ, երբ արտադրած պտուղները կը ինքնաձեռն և միջոց կը գտնէին ազատել օգուտի ձեռներէ: Ի մտերիներէ փաստակար աղեղնութիւնից: Այդ ինձ առիթ է տալիս անցնել տարուայ Գոթա գաւառի աղյուները ոչնչանալու պատճառով մի քանի խօսք ասել: Անցնալ տարի, ստիպելով իրենց, երկրորդ ժամանակ տար և պայծառ օրեր անկրկց յետոյ, սկսեց անձնական և ցարկ եղանակ: Մի գիշեր, երբ երկինքը իւր կապուտ

մակերեւոյթից անյայտացրեց թանձր և թուր ամպերը և կրկնակապով վերա երեւցան բազմաթիւ վաղուր աստղեր, միւս առաւօտը մենք նկատեցինք, թէ բայերի վերա և թէ օրիկրի վերա եղեանք: Մի քանի օրից յետոյ մենք նկատեցինք որ թերի նոր ծնած աստղեր, ողիւզները և բայերը թառամած և թափուած դետնի վերա, որի փնտաբեր աղեղնութիւնը նկատվում է և կը նկատուի երկար ժամանակ մեր գիւղացիների մէջ: Այս գէպը գրեց գիւղացիներին ամբողջ տարուայ բրտներով վատտակածից և թաղեց հրէաների անպատուելի պարտերի մէջ:

Այն ինչ Կրօպոտին շինականները տեսնելով եղանակի փոփոխութիւնը ամենահեշտ կերպով խրկում են իւրեանց աղյուները, զանազան միջոցներով, թէ ցարից և թէ ճիւղներից, որոնցից առաջարկում ենք ահա մեր գիւղացիներին մի ամենահեշտ միջոց բայերը ցրտից պահպանելու համար: Ֆիզիկայից արդէն յայտնի է, որ կան մարմիններ որոնք տաքութիւնը լաւ են հաղորդում իւրեանց մէջ և կան այնպիսի մարմիններ, որոնք լաւ չեն հաղորդում և այս պատճառով առաջինները կոչվում է լաւ հաղորդողներ, իսկ երկրորդ կարգին վրա հաղորդողներ (хорошие и дурные проводники): Յարգը վատ հաղորդ մարմին է և այս պատճառով երբ տեսնում են, որ եղանակը ցրտեց, մատաղ բայերը ցրտաւոր չանելու համար, փախկնում են յարդով, որը պահելով բայերի սեփական տաքութիւնը, ազատում է նոցա ոչնչանալուց:

Աղեղնահոսութեան վերա այս կարճ նկատարութիւնը անհրաժեշտ է, զառնանք դէպի երկրագործական դրոշմները ամառիկը: Մեր գիւղացիները երկրագործական գործիչները նոյնպէս նախապետական են, մենք նկատում ենք մի և նոյն արօրը և ցարանը, ինչ որ մանկութիւնից տեսնել ենք: Նոյր վարկիւն լծում են եթի կամ ուժի զոյգ գամուշներ կամ եղներ և մի քանի մարդիկ կառավարում են նոցա, այնպէս, որ գիւղացիները չունենալով մի արօրի համար բաւական կենդանիք, սկսում են հերթով օգնել միմեանց իրանց կենդանիներով: Ի հարկէ կենդանիների բազմութեան վերա կախում է և շատ ցարեւունանք: Աւելի պարզեք մեր ասածը: Այժմ գիւղացին ունի երեք կամ չորս զոյգ կենդանի, նա երեք կամ չորս զոյգով մի օր պէտք է օգնի մի զոյգ ունեցող գիւղացուն, թէև հաջորդ մի և նոյն է: Այսպիսով մի զոյգ կենդանի ունեցող գիւղացին տարեկան կարողանում է ունենալ երկու կամ երեք օրուար ցարեւ, այն ինչ եթէ մեր գիւղացիները ունենային կատարելագործած գործիք երեք օրուարի տեղ կունենային տասը կամ տասն երկու օրուար ցարեւ իւրեանց մի զոյգ գամուշով կամ եղներով առանց ուրիշ գիւղացու օգնութեան:

Գիւղացիները ցանկով ցորենը կամ արիւշ ընտելեանքը նրանց հարկաւոր ժամանակ ջրում են, ազատում են փնտաւոր բայերից, որոնք արդեւ են լինում կանոնաւոր աճելուն: Եւ երբ հասնում է կատարելութեան, պէտք է հնձել և յետոյ կաշուել: Յուլիսի կեսին դաշտի վերայ լսվում է մանդաղների զննողոցը և դաշտապան ուրախութեան և ոգիւրիչ երգեր. ամեն աշխատում է առաջ գնալ իւր ընկերից: Գիւղացիները մինչև երկուց քարտիք թափելուց յետոյ, բերում են իւրեանց հոնձերը դաշտից, կալը մարում են և սկսում են կաշուել մի քանի զոյգ կենդանիներով մի քանի շաբաթ, իւրաքանչիւր օր երեկոյեան քամում են տալիս: Իսկ եթէ սկսում է անձրեւային եղանակ, խեղճ գիւղացիները արեան քարտիքը, ինչպէս ասում են ռամկորէն, ոչնչանում է: Միթէ մեր մի քանի գիւղերը չէին կարող միմեանց և գնել մի կաշուելու մեքենայ, այն ժամանակ կարծես աւելի հեշտ կերպով և չառավ կաւարակին կաշուելու գործը, առանց սպասելու թէ քամին երբ կը փչի և մեքենայ ինքն կորուր հատկիւնը յարդից և մի օրուայ կարած մի քանի օրերով չէր մնայ:

Այսպէս ահա մենք տեսնում ենք, որ մեր գիւղացիները իւրեանց կոշտ ձեռներով որքան քրտնեք են թափում առաւօտից մինչև երեկոյ արեի կիղիւ ճառագայթների տակ աշխատելով. նոցա հանգստութիւնը միայն կէս օրին է լինում մի ժամ, այն է չափը տակ ջնտում են: Գիւղացիները աշխատում են, բայց բայի ընտանեկան քաղցր կեանքից և ճափի կտորից առել ոչինչ չունեն: մինչև անգամ գիւղացիները ամիս երկու անգամ հազիւ արժանանում են անդաւար կերակրին, որը ամեն օր անհրաժեշտ է աշխատող գիւղացու ֆիզիկական ուժը: Նորոգելու համար: Այն ինչ որ աշխատում են ամբողջ տարի գիւղացիները ապկապութեանց, առաւարածութիւնից, և վարուցանքից, բոլորը մտնում է պար-

*) « Լրացումների ԽՖ. քեար » րադրից քաղուած :

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

12 (12)

ХРЪНОВЫИ ГОДИСТЫИ СИРОПЪ
SIROR DE RAÏORÛ IODE
DE GRIMAULT ET C^{ie}
Средство это содержитъ въ себѣ йодъ въ соединеніи съ сокомъ противу цинготныхъ растеній : хръна, донечной травы и крессона. Предписывается выдавать дмѣстн-
ческимъ и золотушнымъ дѣтямъ въвѣсто гресковаго жира.
Каждый флаконъ, изъ зеленого стекла, имѣетъ вышесказаннныя слова : Siror iode
de Grimault et C^{ie}, а равно и подпись ихъ вверху горлышка. — Продается во
всѣхъ аптекахъ России.

Դ. ԼԵՊԻՇԿԻՆ

ԽժՀ ազգի բնակիչները — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷՆԻ